61
θ6 = 306

Փոխադրեց ԽՆԿՈ ԱՊԵՐ



# ՆՈՐ ՇՈԳԵՇԱՐԺԸ

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ — 1928

18 JUL 2017
82-93

# ՆՈՐ ՇՈԳԵՇԱՐԺԸ

Փոխադրեց ԽՆԿՈ ԱՊԵՐ

ՀՍԽՀ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Յերևան — 1928

Գրառեպվար № 514 բ.   Հ. 676   Տիրաժ 3000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում — 1600

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ

II-241209կ



Նոր է շոգեշարժը. նոր է նրա ծխնելույզ-ծխաքաշը. նոր կաթսա, ենպես մեծ, մեծ կաթսա։

Զանգը՝ նոր։ Սուլոցը՝ նոր։ Լուսարձակ-լապտերը՝ նոր։ Ունի տնակ-մարդարնակ։ Ունի չորս անիվ։

Բայց տես վոր շոգեշարժը ենպես տխուր է...

Չգիտի ինչպես բանեցնի իր եդ մասերը։

Ուրիշ շոգեշարժեր, ճամպին, իր շուրջը շվվում են՝ հևում, սուլում, զանգահարում՝ գը՛նգ. գը՛նգ...։ Գոլորշի արձակում՝ ֆը՛շշ, թը՛շշ։ Մի մեծ շոգեշարժ շարժում է անիվները կամացուկ յերգելով՝

Գընգըն. գընգըն։

Նոր շոգեշարժը գլխի ընկավ, վոր եդ՝ շոգեշարժի յերգի բառերից մեկն է։ Նա շատ ուզեց՝ ինքն էլ յերգի ու ճչաց.

— Կուզեմ՝ կանգնած չմնամ,
ճամփա ընկնեմ, գնամ.
Թե գիտեք՝
խրատեք,

ձեզ կլսեմ.
վո՞նց սկսեմ։

Հենց եդտեղ յերկու մարդ եյին կանգնած, վոր յեկել եյին շոգեշարժին սովորեցնեն, թե ինչպես տեղից շարժվի։



Ձեր կարծիքով ո՞վքեր եյին են մարդիկը։

Մեկը մեքենավարը, մյուսը հընոցապանը - հնոցավառը։

Մեքենավարը, վոր լսեց շոգեշարժի կանչը՝ հարցրեց.

— Ի՞նչ ես ուզում, նոր մեքենա։ Նա յել պատասխանեց.

— Կուզեմ ձեն-ձուկ,
ակներս տեկ, տուկ,
տը՛նկ, տը՛նկ, տը՛նկ։
Զանգս՝ գը՛նգ, գը՛նգ, գը՛նգ.
գոլորշիս՝ հևա,
ճչա ու ճվա,
կրակս վառվի,
ծուխը վեր տարվի.



լապտերս լույս տա,
ինձ ճամբա ցույց տա.
սուլոցս սուլի,
յես յելնեմ ծուլի
ու յերգեմ եսպես՝
Յե-կա՜ յես,
յեկա՜ յես...
Յե-կա-յես։



Մեքենավարն ու հնոցավառը ենպես ուրախացան վո՜ր, յերբ լսեցին շոգեշարժի ուզածը։
Մեքենավարն ասավ.

Մեքենա, դիմացի,

ինչ է պետք՝ իմացի,
սովորի, և տուր
քեզ բարի ճամփա։

Մեքենավարը հետո հնոցավառին ասաց.
— Պետք ջուր տանք մեր ծարավ մեքենային։
Ու նրանք ռեզինե աղիքի ծայրը ամրացրին ջրի ավազանի բակին և շոգեշարժի ջրամբարը՝ տենդերը՝ ջրով լցրին։ Ջուրը գնաց լցվեց մեծ կաթսան։ Կաթսան ջրով լցվեց։ Կաթսայի ջուրը վզվզալեն յերգեց.

— Յես ջուր եմ՝ տաքացա,
ջրից գոլորշի դարձա։



Մեքենան զգաց, որ կաթսան ջրով լիքն է, ասաց.
— Յես ջուր ունեմ, ջուր, ջուր, ջուր,
ինչպես գնամ՝ ճամփա ցույց տուր։



Հնոցավառը ասաց.
— Մեքենա, դիմացի,
ինչ է պետք՝ իմացի,
սովորի և տուր
քեզ բարի ճամփա։



Հետո մեքենավարն ասում է.
— Հիմա ածուխ կտանք մեքենային։
Նրանք ածխապահեստն ածուխով լցրին։ Հնոցավառը կաթսայի տակ կրակ արավ։ Ածուխը վառվեց։ Կրակը յերգեց։

— Յես հուր-կրակ,
կաթսայի տակ.
կերածս ածուխ,
հանածս մուխ-ծուխ.
ջուրն արի գոլորշի,
որ մեքենան քաշի։

Մեքենան զգաց, որ քնած կրակը զարթնել է, սկսել է աշխատել, որ ջուրը գոլորշի դարձնի։

Ահա ջուր,
ահա ածուխ,
ահա հուր,
ահա ծուխ
և գոլորշի,
որ ինձ քաշի։

Հապա ինչպես
չես դրանցով,
ինչպես վազեմ
յերկաթգծով։

Բայց մեքենավարն ասավ նրան.

Մեքենա, գլխացի,
ինչ է պետք՝ իմացի,
սովորի և ապա
քեզ բարի ճամփա։



Մեքենավարը յետո ասավ հնոցավարին.

— Գիտի լավ յուղենք մեր մեքենան։

Նրանք վերցրին փոքրիկ յուղամանը և մի լավ յուղեցին մեքենայի բոլոր մասերը։







Ու եդ ժամանակ յուղը յերգեց.

Չի լինի ճռճռոց,
չի լինի ժռժռոց,
չի լինի ճռճռոց.
չի լինի մռմռոց։

Մեքենան զգաց, որ իր բոլոր մասերը յեղվեցին, ասավ ելի շատ.

— Ահա ջուր.
ահա ածուխ,
ահա հուր,
ահա ծուխ,
յես էլ մաս-մաս
լավ յեղվեցի,
յուղի միջին,
շաղաղվեցի։
Հապա ինչպես
չես դրանցով,
ինչպես վազեմ
յերկաթգծով։

Բայց հնոցավարը նրան ասավ.

— Մեքենա, գլխացի,
ինչ է պետք՝ իմացի,
սովորի և ապա
քեզ բարի ճամփա։

Էն ժամանակ հնոցավառը մեքենավարին ասավ.
— Մեր մեքենային ավազ տանք։
Նրանք կաթսայից վերև դրված արկղը ավազով լիքը լցրին, որ ավազը յերկու խողովակի միջով գա ու թափվի անիվների առաջ էն ժամանակ, յերբ յերկաթգիծը անձրևից թրջված լինի ու պլստան դառնա։
Էն ժամանակ ավազը յերգեց.



— Անձրև որ անի,
ակը չի բռնի.
բայց յես իմ տեղից՝
լիքը արկղից
կ կաթեմ կաթ-կաթ
թաց ճամփին՝ հատ,
հատ,
որ գնան ակներ
վարից դեպի վեր,
շարժեն շոգեշարժ,
չմնա անշարժ։



Մեքենան զգաց, որ արկղը չոր ավազով լիքը լցվեց, շատ պահանջեց.

— Ահա՛ ջուր,
ահա՛ ածուխ,
ահա՛ հուր,
ահա՛ ծուխ,
յեվ գոլորշի,
որ ինձ քաշի.
Յես էլ մաս-մաս
յեղված-դիզված,
շատ էլ ավազ
արկղս ածված,
հապա ինչպես
յես գրանցով,
ինչպես վազեմ
յերկաթգծով։





Բայց մեքենավարը կանգնեցրեց նրան՝ ասելով.

— Մեքենա, դիմացի,
ամեն ինչ իմացի,
սովորի և ապա
քեզ բարի ճամփա։

Էն ժամանակ մեքենավարն ասավ հնոցավառին.
— Մեր մեքենայի լապտերը վառենք։
Նա փալասը վերցրեց, առաջ սրբեց լապտերի ապակին, հետո՝ լապտերը, հետո նավթ ածեց մեջը. հետո պատրույգը վառեց լուցկով ու հետո յել լապտերի դուռը փակեց։ Էդ ժամանակ լապտերը յերգեց.



— Յես լապտեր եմ լուսարձակ.
ճամփան կանեմ անփորձանք։

Մեքենան տեսավ, որ պայծառ վառվող լույսի շողերը լուսավորում են իր առաջը՝ շատ պահանջեց.

— Ահա ջուր,
ահա հուր,
ահա՛ ածուխ,

ահամ ծուխ
չեմ գոլորշի,
վոր ինձ քաշի.
յես ել չեղված,
ավազս ածված.
յեմ վառ լապտեր՝

մեծ լույսի տեր.
հապա ինչպես
յես դրանցով,
ինչպես վազեմ
յերկաթգծով։



Բայց մեքենավարը պատասխանեց.
— Հիմա տեսնենք, պատրաստ ես վոր, մեքենա՛։
Նա մտավ իր տնակը։ Հնոցավառն ել կողքին։
Են ժամանակ մեքենավարն ասավ.
— Նոր մեքենա, կարո՞ղ ես դու սուլել։
Ասավ ու քաշեց բռնակը ու բաց թողեց գոլորշին սուլոցի մեջ։ Շոգեշարժը շվվացրեց

ու՜, ու՜, ու՜, ու՜,…

Ո՞վ է ուզում սուլոցը դառնալ:

Են ժամանակ մեքենավարն ասավ.
— Նոր մեքենա, կարո՞ղ ես դու ծուխ արձակել.
Մեքենան սև սև ծուխ արձակեց

փու՜ֆ, փու՜ֆ, փու՜ֆ, փու՜ֆ,

Ո՞վ է ուզում ծուխը դառնալ:

Են ժամանակ մեքենավարն ասավ.



— Նոր մեքենա, կարո՞ղ ես դու գոլորշի արձակել, ասավ ու բացեց փակը։ Մեքենան իսկույն գոլորշի տվեց.



Թո՜ւ, Թո՜ււււ.

Ո՞վ է ուզում գոլորշին լինել:

Են ժամանակ մեքենավարն ասավ.
— Նոր մեքենա, կարո՞ղ ես դու ավազ թափել ու շուտ տվեց բռնակը։
Ավազն իսկույն թափվեց.

չը՜փ, չը՜փ, չը՜փ, չը՜փ.

Ուղիղ ռելսների վրա, շոգեշարժի անիվների առաջ։

Ո՞վ է ուզում դառնալ ավազ:

Են ժամանակ մեքենավարն ասավ.
— Արդյոք լա՞վ է լույս տալիս ու փայլում քո լապտերը, Նոր մեքենա։
Նայեց, տեսավ կարմիր լույսը ինչպես լուսավորում է յերկաթգիծը շոգեշարժի առաջ։
Մեքենավարն ելի ասավ.
— Նոր մեքենա, կարո՞ղ ես դու արդյոք անիվները պտտացնես ու չըխկչըխկացնես.
Մեքենավարը դարձրեց մյուս լծակը, անիվներն սկսեցին պտույտ գալ.

չը՜խկ, չը՜խկ, չը՜խկ, չը՜խկ

Ո՞վ է ուզում անիվ դառնալ:

*Էն ժամանակ մեքենավարն էլ ասավ.*

*Այ նոր մեքենա,*
*ժամանակ է հիմա,*
*կամաց, կամաց*
*ճամպա գնա.*



*Սուլի՛ր, սուլո՛ց։*
*Զնգա՛, զանգա՛կ։*
*Ծո՛ւխ, վեր քաշվի՛։*
*Հևա՛, գոլորշի։*

*Թափվի՛ր, ավա՛զ։*
*Լույս տո՛ւր, լապտեր։*
*Գլորվեցե՛ք, անիվներ։*

*Հասավ ժամանակը, վոր նոր մեքենան իր յերգը յերգի։*

*Սուլոցը սուլեց։*
*Զանգակը զնգաց.*
*Ծուխը բարձրացավ.*
*Գոլորշին դուրս պրծավ։*
*Ավազը թափվեց*
*Լապտերը լուսավորվեց.*
*Անիվները պտույտ-պտույտ*
*պտըտվեցին, գլորվեցին ու*
*չը՛խկ, չը՛խկ, չխկչխկացրին։*

Յերեխաները միասին կրկնում են շոգեշարժի ջոկ ջոկ ձայները՝



բիմ-բամ. դիմ-դոմ, փուֆ, փուֆ, փուֆ. վըշ-բըշ, վըշ-բըշ. ճխփ-ճրփ, ճխփ-ճրփ. չխկ. չխկ, չխկ։

*Այ, թե ինչպես է յերգում նոր մեքենան, յերբ առաջին անգամ ճամպա յե ընկնում, յերբ եդ բոլոր բաները դեռ լավ չի իմանում։ Բայց արդեն այլ կերպ է յերգում, յերբ սովորում է կոկ և արագ առաջ շարժվելը։*



*Էն ժամանակ նա յերգում է շոգեշարժի ցանկալի յերգը։ Եդ յերգը ամենից լավ յերգը կը լինի, պատճառ վոր մեր մեքենան բոլոր մեքենաներից արագաշարժը կլինի, համարձակը կլինի, բանիմացը կլինի։ Յեվ այ, թե էն ժամանակ ինչպիսի յերգ պիտի յերգի մեր նոր մեքենան։*

*Դուք կլսեք ռելսների մոտ եդ յերգը դեռ յերկար մինչև շոգեշարժի գալը և գալուց էլ հետո։ Հիմա ականջ դրեք եդ յերգին.*

Կամացուկ սկսել, հետո ուժեղացնել ձայնը մինչեվ «յեկա՛. յեկա» խոսքը, յեվ հետո ֆիչ ֆիչ, աստիճանաբար կրկնել կամաց կամաց յեվ ձայնը հասցնել փափոցի։



Ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես.

Ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես։

Ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես։

Ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես, ահա գալիս եմ յես.

ՅԵԿԱ, ՅԵԿԱ, ՅԵԿԱ, ՅԵԿԱ, ՅԵԿԱ.

Գնացի, գնացի, գնացի, գնացի։

Գնացի, գնացի, գնացի, գնացի։

Գնացի, գնացի, գնացի, գնացի

Գնացի, գնացի, գնացի, գնացի։



ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՐ

ՀՀ Ազգային գրադարան
NL0766465

1928թ.
11
24120

ՀՍԽՀ ՊԵՏՀՐԱՏ

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.